## ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԸ

1994 թ. ապրիլի 14-ին տեղի ունեցավ ՀՀ ԳԱԱ տարեկան ընդհանուր ժողովը, որը քննարկեց Ակադեմիայի 1993 թ. գործունեությունը։

Ժողովը ներածական խոսքով բացեց Ակադեմիայի պրեզիդենտ Ֆ. Տ. Սարդսյանը։ Ձեզ հայտնի է, ասաց նա, որ մենք անցյալ տարում ևս աշխատել ենք ծանր պայմաններում։ Ակադեմիայի հիմնարկների ու նախագահության աշխատանքները անհրաժեշտ մակարդակով ծավալելու համար չենք ունեցել ֆինանսական միջոցներ և այլ հնարավորություններ։ Սակայն, չնայած դրան, Ակադեմիայի գիտական կոլեկտիվները 1993 թ. ընթացքում շոշափելի արդյունքների են հասել գիտահետազոտական պլանների և գիտական աշխատանքների ծրագրերի կատարման ուղղությամբ։ Ձեռք են բերվել տեսական և կիրառական մի շարք կարևոր արդյունքներ։ Հետազոտությունների տվյալները մշակվել և ամփոփվել են մենագրություններում և գիտական հոդվածներում։

Ներածական խոսքում միաժամանակ ընդգծվեցին Ակադեմիայում և գիտական այլ հիմնարկներում տեղ գտած մի շարք թերություններ։ Հանրապետությունում կան գիտական բազմաթիվ հիմնարկներ, որոնք իրենց հետազոտությունների ծրագրերը չեն կոորդինացնում կամ էլ մասամբ են կոորդինացնում Ակադեմիայի հետ։ Այս մասին արժե լուրջ խորհել և տալ համապատասխան առաջարկություններ։ Եթե, օրինակ, Ակադեմիան և էներգետիկայի ու վառելիքի հարցերով զբաղվող գիտահետազոտական համապատասխան կոլեկտիվները անմիջականորեն չգործակցեն, ապա մեր կարծիքով, դժվար կլինի արագ լուծել էներգետիկայի հետ կապված հիմնախնդիրները։ Ուրեմն պետք է անհրաժեշտ պայմաններ ստեղծել հանուն արդյունավետ համագործակցության, թեկուզև համատեղ ենթակայության ձեռնարկություններ հիմնելու միջոցով։

Անորոշ դրություն է ստեղծվել սեյսմիկ պետական ծառայության հետ մեր փոխհարաբերություններում, ծառայություն, որի կազմակերպման գործում Ակադեմիան ժամանակին մեծ մասնակցություն է ունեցել։ Ձգիտեմ թե որքանով էր հիմնավորված որոշ ծառայություններ Ակադեմիայի համակարգից դուրս հանելը։ Վերջերս, օրինակ, բարձրացվել էր Գառնիի դիտարանը ԳԱԱ կազմից հանելու հարցը։ Մենք առաջ ենք քաշել ինչպես Գառնիի դիտարանի, այնպես էլ նշված ծառայությունների համատեղ ենթակայության և շահագործման հարցը, բայց ընդհանուր համաձայնության դեռևս չենք եկել։ Հարկավոր է վերջնականապես ճշտել, թե ով ինչով պետք է զբաղվի և միայն այդ դիրքերից որոշել ենթակայության հարցերը։ Նույնը վերաբերում է նաև մեր հանրապետության կենսապահովման համար խիստ կարևոր մի շարք այլ բնագավառների։

Մեր գլխավոր նպատակն է, շարունակեց Ֆ. Սարդսյանը, անհրաժեշտ պայմաններ ստեղծել ԳԱԱ երբեմնի փառքը պահպանելու և ամրապնդելու համար, Ակադեմիայի ամբողջ գիտական կարողությունը լիովին ի սպաս դնելու ժողովրդի վերածննդին, հայրենիքի պաշտպանական պոտենցիալի հզորացմանը։ Չնայած մեր հնարավորությունները շատ են, բայց այս ուղղությամբ քիչ բան է կատարված։ Բոլորս լավ ենք հիշում, թե ժամանակին մեր ինստիտուտների կողմից որքան առաջարկություններ են արվել այս

կամ այն նոր, տնտեսական կարևոր նշանակություն ունեցող գիտական հետազոտությունների հիման վրա արտադրություններ կազմակերպելու նպատակով։ Այդ ուղղությամբ որոշ քայլեր կատարվել են։ Վերջին տարիներին ի՞նչ ենք ավել մեր ժողովրդին։ Շատ քիչ բան։ Իհարկե, կան և օբյեկտիվ պատճառներ, բայց արդյո՞ք մենք ցուցաբերել ենք անհրաժեշտ հետևողականություն նույնիսկ այս պայմաններում արդյունքի հասնելու համար։ Կարծում եմ, որ ոչ։ Մենք հաճախ կարդում, կամ ոչ բանիմաց մարդկանց կողմից լսում ենք գիտական այս կամ այն պրոբլեմներին վերաբերող անհիմն ու անհեթեթ հայտարարություններ, բայց եզակի դեպքերում ենք հանդես գալիս իսկական գիտական պարզաբանումներով։ Այդ, առաջին հերթին մեղքը մերն է՝ Ակադեմիայի ղեկավարությանը։ Մեր տեսակետը սովորաբար արտահայտում ենք մեծ ուշացումով, այն էլ այն դեպքում, երբ ըստիպված ենք լինում։ Հարկավոր է ամեն կերպ ակտիվացնել Ակադեմիայի դերը Հանրապետության սոցիալ-անտեսական ու քաղաքական կյանքում։

Շուտափույթ լուծում պահանջող առաջնահերթ խնդիր է վառելիքաէներգետիկ ճգնաժամից Հանրապետությունը դուրս բերելը, բայց դժբախտաբար, այս հարցում Ակադեմիան խիստ թերացել է։ Մենք այն կարծիքին ենք, որ ամենամոտ ժամանակում պետք է ստեղծենք համապատասխան գիտական կոլեկտիվ և ամենաբարձր մակարդակով գործնական առաջարկություններ ներկայացնենք։ Պետք է ասեմ, որ այս ժողովում սկզբում նախատեսել էինք լսել գիտական զեկուցում՝ նվիրված վառելիքաէներգետիկ հարցերին, բայց հրաժարվեցինք այդ մտքից, որովհետև եկանք այն եզրակացության, որ հարկավոր է պատրաստվել և ներկայացնել կոնկրետ գործնական առաջարկություններ։ Մենք տակավին չենք հատուցել մեր մեծ պարտքերից մեկը՝ Հանրապետության բնական ռեսուրսների (հանքահումքային, գյուղատնտեսական, ռեկրեացիոն և այլն) օգտագործման գիտական, տեխնիկական, տեխնոլոգիական խնդիրների մշակումը՝ ժողովրդական տնտեսության մեջ դրանք լայնորեն կիրառելու համար։

Ցանկանում եմ զեկուցել ժողովին, որ առաջխաղացումը շատ քիչ է մեր ամենացավոտ հարցերից մեկի լուծման գործում։ Խոսքը վերաբերում է պոլիգրաֆիական բազային՝ ապագրական սարքավորումներ ձեռք բերելուն։ Շատ ծանր պրոբլեմ է դարձել ինստիտուտների գիտահետազոտական աշխատանքների հրատարակումը։ Միջոցների և ուժերի գերլարվածության պայմաններում կարողանում ենք հրատարակել պատրաստի աշխատանքների միայն 10—15 տոկոսը։ Ոչ բավարար ֆինանսավորման պատճառով նորմալ չեն հրատարակվում նաև Ակադեմիայի 14 ամսագրերը, որոնց պարբերականությունը և ծավալները խիստ կրճատվել են։

Զարգացնց անհանգստացնող վիճակ է ստեղծվել ինստիտուտների նյութատեխնիկական մատակարարման ասպարեզում։ Ինստիտուտները, չունենալով համապատասխան ֆինանսավորում, գների ահավոր աճի և գրամի արագ արժեզրկման պայմաններում հնարավորություն չունեն բավարարել իրենց տարրական պահանջները։ Ըստ էության դադարեցվել են Ակադեմիայի ցծով պետական կենտրոնացված մատակարարումները։ Մենք կառավարությունից խնդրում ենք օգնել մեզ և այս խնդրի լուծման համար ինչ-որ ճանապարհներ գտնել։ Այլ կերպ հարվածի տակ է դրվում գիտահետազոտական աշխատանքների հաստատված պլանների կատարումը։

Ակադեմիայի պրեզիդենտը խոսեց նաև առաջիկա անելիքների մասին։

Ընդհանուր ժողովն այնուհետև լսեց տեղադեմիկոս-քարտուղար Վ. Բ. Բարխուդարյանի հաշվետու զեկուցումը Հայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի 1993 թ. գիտական և գիտակազմակերպչական գործունեության հիմնական արդյունքների մասին (զեկուցման հայերեն և ռուսերեն գրավոր տեքստը նախօրոք ուղարկվել էր ժողովի մասնակիցներին)։ Զեկուցման մեջ հանգամանորեն խոսվեց ֆիզիկամաթեմատիկական և տեխնիկական, քիմիական և երկրաբանական, կենսաբանական, հասարակական գի-

տությունների բնագավառում 1993 թ. կատարված գիտահետազոտական աշխատանքների, նախագահության և բաժանմունքների գիտակազմակերպական գործունեության, գիտական համագումարների և կոնֆերանսների, գիտահրատարակչական խորհրդի, գիտական կադրերի և ասպիրանտուրայի, գիտահետազոտական աշխատանքների ֆինանսավորման և այլ հարցերի մասին։

Հաշվետու զեկուցման շուրջը բացվեց մտքերի փոխանակություն, որին մասնակցեցին ակադեմիայի թղթակից անդամներ Լ. Հախվերդյանը, Կ. Ղարագյոզյանը, Թ. Ասաթիանին, Օրգանական քիմիայի ինստիտուտի դիրեկտոր (տնօրեն) Շ. Բաղանյանը, Մեխանիկայի ինստիտուտի դիրեկտոր Լ. Ազալովյանը, Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի դիրեկտոր Ռ. Հովհաննիսյանը, Աստղադիտարանի գիտաշխատող Ա. Ղարիբջանյանը, ակադեմիկոս Մ. Ներսիսյանը։

Ելույթ ունեցողները կանգ առան Ակադեմիայի աշխատանքում տեղ գրտած թերությունների վրա, հատկապես նշելով այն հանգամանքը, որ Գիտությունների ակադեմիան գործուն մասնակցություն չի ցուցաբերում մեր ժողովրդին հուզող հարցերի քննարկմանը։

Ժողովում ելույթ ունեցավ նաև բարձրագույն կրթության և գիտության նախարար Վ. Գնունին, որը շոշափեց նախարարության և Ակադեմիայի միջև նորմալ բարյացակամ հարաբերություններ հաստատելու անհրաժեշտության հարցը։

Ընդհանուր ժողովում հանդես եկավ Հայաստանի Հանրապետության փոխնախագահ Գագիկ Հարությունյանը։ Նա կանգ առավ Ազգային ակադեմիայի և ընդհանրապես մեր երկրում գիտության զարգացման հարցերի վրա, նշեց եղած թերություններն ու բացթողումները։ Հանրապետության փոխնախագահը հատկապես շեշտեց այն հանգամանքը, որ Գիտությունների ակադեմիան դեռևս չի ցուցաբերում անհրաժեշտ նախաձեռնություն Հայաստանի Հանրապետության հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելու հարցում։ Պետք է հուսալ, ասաց հանրապետության փոխնախագահը, որ Հայաստանի գիտությունների ակադեմիան այսուհետև ավելի մեծ եռանդ կցուցաբերի իր առջև դրված խնդիրները հաջողությամբ իրագործելու համար։

Ն. ԴԵՐՈՅԱՆ